Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2017թ. նոյեմբերի 3-ին քաղաք Տաշքենդում ստորագրված «2006 թվականի նոյեմբերի 24-ի ԱՊՀ մասնակից պետությունների միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսման և մասնագիտական հմտությունների պահանջների ներդաշնակեցման մասին Համաձայնագրում փոփոխությունների կատարման մասին» Արձանագրության հաստատման նպատակահարմարության մասին

«2006 թվականի նոյեմբերի 24-ի ԱՊՀ մասնակից պետությունների միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսման և մասնագիտական հմտությունների պահանջների ներդաշնակեցման մասին Համաձայնագրում փոփոխությունների կատարման մասին» Արձանագրության նպատակն է հանդիսանում պատշաճ կերպով կազմակերպել ԱՊՀ մասնակից պետությունների միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսումը, ինչպես նաև մասնագիտական հմտության յուրացումը:

Արձանագրությամբ սահմանվում են միջազգային ավտոմոբիլային փոխադրողի մասնագիտական հմտության վկայականի անհրաժեշտ տվյալները՝ մասնավորապես վկայականի տրման վայրն ու ամսաթիվը, փոխադրողի ծննդյան ամսաթիվը, դասակարգման աստիճանը, ԱՊՀ մասնակից պետությանը համապատասխանող անվանումը, տարբերակիչ խորհրդանիշը, միջազգային ավտոմոբիլային փոխադրողների նախապատրաստման ոլորտում վկայական տրամադրող ԱՊՀ մասնակից պետության իրավասու մարմնի անվանումը, ինչպես նաև ատեստավորման հանձնաժողովի նախագահի և քարտուղարի տվյալներն ու ստուրագրությունը:

Վկայականը իրենից ներկայացնում է խիստ հաշվառման ձևաթուղթ, որը պետք է ունենա պաշտպանվածության տարրեր, պատրաստվեն և յուրացվեն ըստ խիստ հաշվառման ձևաթղթերի պաշտպանվածության մակարդակի պահանջներին և դրանց յուրացման և հաշվառման կարգով՝ ԱՊՀ մասնակից պետությունների օրենսդրության համաձայն:

Վկայականը հիմք է հանդիսանում որոշել վարորդի որակավորման համապատասխանությանը Համաձայնագրի պահանջներին, ինչը թույլ կտա նշված անձնաց ազատ մասնակցել միջազգային տրանսպորտային փոխադրումների գործընթացներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2017թ. նոյեմբերի 3-ին քաղաք Տաշքենդում ստորագրված «2006 թվականի նոյեմբերի 24-ի ԱՊՀ մասնակից պետությունների միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսման և մասնագիտական հմտությունների պահանջների ներդաշնակեցման մասին Համաձայնագրում փոփոխությունների կատարման մասին» Արձանագրության հաստատումը գտնում ենք նպատակահարմար:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար՝ **Հ. ԱՐՇԱԿՅԱՆ**